Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Թամար Ալեքսանյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության
Մոնիթորինգի բաժնի պետ

Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն), մայիսի 29-31

Հրավիրող կողմը.
ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ղեկավար կոմիտե

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ղեկավար կոմիտեի (որի անդամ է հանդիսանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ) 19-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով:

Քննարկված թեմաները.
Հանդիպման ձևաչափը ներառել է աշխատաժողովներ, շնորհանդեսներ, թեմատիկ քննարկումներ, մասնավորապես.

- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ UNECE) «Կրթություն հանուն կայուն զարգացման» (այսուհետ՝ ESD) ռազմավարության շրջանակում ազգային զեկույցի ներկայացման նպատակով՝ անց են կացվել մասնակից երկրների կարողությունների զարգացման աշխատաժողովներ, որոնք շարունակությունն էին 2023թ. դեկտեմբերին և 2024թ. հունվարին անցկացված առցանց աշխատաժողովների:
- Ներկայացվել են ESD-ի ռազմավարության շրջանակում Միացյալ Թագավորության, Ավստրիայի, Կիպրոսի, Բելգիայի, Նիդեռլանդների, Իսպանիայի, Շվեյցարիայի, Մոլդովայի կողմից իրականացված ծրագրերն ու փորձառությունը:

- Աշխատաժողովների և փորձի փոխանակման շնորհանդեսների շրջանակում մանրամասն անդրադարձ է կատարվել ESD-ի 4 ուղղություններին կայուն զարգացման օրակարգի ապահովման և առաջմղման համատեքստում, որոնք են՝
    1. «Որակյան կրթություն»,
    2. «Ամբողջական ինստիտուցիոնալ մոտեցում»,
    3. «Թվային կրթություն, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներ»,
    4. «Ձեռնարկատիրություն, զբաղվածություն, նորարարություն»:
- Ներկայացվել և քննարկվել են 4-րդ ուղղության զարգացման համատեքստում երիտասարդների ներգրավվածության խթանման հնարավորությունները, ու այդ նպատակով ս.թ. հունիսի 27-28-ը Կիպրոսում կազմակերպվելիք՝ «Երիտասարդների հզորացում հանուն կայուն ապագայի» UNECE-ի ֆորումի կազմակերպչական հարցերը:
- Քննարկվել են տարածաշրջանային, միջազգային և այլ կառույցների հետ UNECE-ի համագործակցության հնարավոր ուղղությունները, ինչպես նաև միջազգային այլ ֆորումներում ESD օրակարգի ներառման ու առաջմղման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կարողությունների զարգացման աշխատաժողովների ընթացքում հստակեցվել են այն թեմատիկ ուղղություններն ու օրինակները, որոնք կարող են ներկայացվել ազգային զեկույցներում, քննարկվել իրականացված ծրագրերի ազդեցությունները տեսանելի ու չափելի դարձնելու և ցուցանիշներ ներառելու հնարավորությունները:

Շեշտադրվել է ESD-ի օրակարգի շրջանակում իրականացվող ծրագրերը և ազգային զեկույցները լայն դիտանկյունով (ոչ միայն էկոլոգիական) ներկայացնելու, ինչպես նաև՝ գործընթացին և՛ կրթության ոլորտի, և՛ շրջակա միջավայրի ոլորտի գերատեսչությունների մասնակցության անհրաժեշտությունը:

Ֆորմալ կրթության մակարդակում ընդգծվել է ESD-ի ռազմավարությունը համակարգային՝ ամբողջական ինստիտուցիոնալ մոտեցմամբ, իրականացնելու կարևորությունը, առանձնացնելով հատկապես հետևյալ բաղադրիչների՝ տեսլականի, չափորոշիչների, մանկավարժական հմտությունների, միջավայրի/ֆիզիկական ենթակառուցվածքների և կառավարման համակարգի փոխկապակցվածությունն ու փոխգործելիությունը: Ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ու միջոցառումների դերը ևս առանցքային է ընդունվում ռազմավարության իրագործման համար:

UNECE-ի քարտուղարության կողմից ներկայացվել է հոգաբարձուների ֆոնդի ֆինանսական հաշվետվությունը, և առաջարկվել անդամ-երկրներին, ըստ ցանկության և հնարավորության, ֆինանսական հատկացումներ կատարել կոմիտեի ընթացիկ գործունեության ապահովման համար:

ՀՀ-ի կողմից ներկայացվելիք ազգային զեկույցի կազմման վերաբերյալ մեթոդաբանական և ծրագրային հարցեր են քննարկվել կոմիտեի փորձագետի հետ, միաժամանակ անդրադառնալով «Կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագր»-ի փոխկապակցվածությանը կայուն զարգացման նպատակների և «Կրթություն 2030

օրակարգ»-ին, ինչպես նաև հանրակրթության նոր չափորոշչում «կանաչ», թվային և ձեռնարկատիրական կրթության բաղադրիչների ներառվածությանը:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման արդյունքում որոշվել է «Կրթություն հանուն կայուն զարգացման 2021-2025 թվականների ռազմավարության» շրջանակում ներկայացվելիք ազգային զեկույցների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի նոյեմբերի 30-ը, ինչի արդյունքում 2025 թվականի մայիսին ակնկալվում է ունենալ Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանի զեկույցի նախնական նախագիծը: Այնուհետև՝ մինչև 2026 թվականի մայիս ամիսը համապարփակ զեկույցը քննարկումների ու վերջնականացման փուլ կանցնի և կհաստատվի 2026 թվականի մայիսին կայանալիք՝ UNECE-ի ղեկավար կոմիտեի 21-րդ հանդիպմանը:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է, որ «Կրթություն հանուն կայուն զարգացման 2021-2025 թվականների ռազմավարության» շրջանակում ներկայացվելիք ազգային զեկույցի հարցաշարը UNECE-ի կողմից ուղարկվի անդամ-երկրների կրթության և շրջակա միջավայրի ոլորտների գերատեսչություններ՝ ֆորմալ խողովակներով, որից հետո ազգային մակարդակում աշխատանքները կհամակարգվեն և մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ը ազգային զեկույցները կներկայացվեն UNECE-ի քարտուղարություն:

Ստորագրությունը, ամսաթիվը.
06 հունիսի 2024թ.

Թամար Ալեքսանյան